



Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիր

2012-2013

1. Ներածություն

ա) Միջոցառումների սույն ծրագրի նպատակն է ապահովել թափանցիկություն ԵԳՊԱ-ի գործառույթների և հատկապես հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ՝ պարզաբանելով այն մոտեցումները, որոնք որդեգրել է ԵԳՊԱ-ն այդ խնդիրները լուծելու համար: Միջոցառումների սույն ծրագրի շրջանակներում կոռուպցիան սահմանվում է որպես՝

- **պետական իշխանության չարաշահումը անձնական շահերը բավարարելու համար (World Bank, 1997; UNDP, 1999):**

Կոռուպցիան կարող է ընդունել վարքագծի տարբեր դրսևորումներ, ինչպիսիք են՝ կաշառակերություն, ճնշման գործադրում, կողմնապահություն, տվյալների կեղծում, նվիրատվություն նպատակներին հասնելու համար և այլն:

բ) Հասարակության առջև իր պատասխանատվություններն պատշաճ իրականացնելու համար ԵԳՊԱ-ն որդեգրում է հետևյալ հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը, որպեսզի

- կանխարգելի կոռուպցիայի ցանկացած տեսակի դրսևորումը,
- նպաստի կոռուպցիայի ցանկացած տեսակի բացահայտմանը,
- սահմանի կոռուպցիայի պատճառները վերհանելու պարզ և արդյունավետ ուղղիները:

գ) ԵԳՊԱ-ի հետևյալ ոլորտները առավել խոցելի են կոռուպցիայի արտահայտման համար՝

- ընդունելության, ավարտական և միջանկյալ քննությունները,
- ուսումնական մասի գործողությունները.
 1. ուսանողների հեռացման, փոխանակման, շարժունության և վերականգման հետ կապված խնդիրները,
 2. ուսանողների գնահատման հետ կապված խնդիրները,
- աշխատատեղերի համալրման խնդիրները և աշխատանքային այլ հարաբերություններ,
- ֆինանսատնտեսական հարցերի հետ կապված խնդիրներ, ինչպիսիք են՝ գնումները և ֆինանսական այլ գործողությունները:



դ) Կոռուպցիաի վտանգը կարող է կրել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթ: ԵԳՊԱ-ն ակնկալում է, որ ն՛ վարչական անձնակազմը, ն՛ պրոֆեսորադասախոսական կազմը, այս հարցերի վերաբերյալ կցուցաբերեն հաշվետվողականության և բարոյականության բարձր մակարդակ:

ե) Սույն ռազմավարությունը մշակվել և իրականացվում է՝ ի պատասխան ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և իրականացման ծրագրի (2009-2012):



Միջոցառումների ցանկ (2012-2013)

Ընդունելության, ավարտական և միջանկյալ քննությունների անցկացում				
Միջոցառում	Բնույթ	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու	Վերջնաժամկետ
1 Լրամշակել ԵԳՊԱ-ի ընդունելության քննությունների անցկացման կարգը և ընթացակարգը և հրապարակել այն ԵԳՊԱ - ի կայքում	Կանխարգելում	Ընդունելության քննությունների գործընթացի թափանցիկություն	Դեկաններ, ուսումնական վարչություն	2013թ. Ապրիլ
2 Մշակել մասնագիտական առարկաների՝ վերջնարդյունքներով արտահայտված գնահատման կարգ և ընթացակարգ և հրապարակել այն	Կանխարգելում	Գնահատման օբյեկտիվություն և թափանցիկություն	Դեկաններ, ամբիոնների վարիչներ, ուսումնական վարչություն	2013թ. Մայիս
3 Մշակել քննությունների բողոքարկման կարգ և ընթացակարգը	Կանխարգելում	Գնահատման և քննությունների անցկացման օբյեկտիվություն և թափանցիկություն	Դեկաններ, ամբիոնների վարիչներ, ուսումնական վարչություն	2013թ. Մայիս
4 Մշակել կիսամյակային քննությունները անցկացման և մշտադիտարկման կարգ	Կանխարգելում և բացահայտում	Թափանցիկության ապահովում	Դեկաններ, ամբիոնների վարիչներ, ուսումնական վարչություն	2012թ. Դեկտեմբեր
5 Կազմակերպել դասախոսների և ուսանողների հետ հանդիպումներ՝ կոռուպցիոն երևույթների դեմ լուսաբանումը ապահովելու	Կանխարգելում և բացահայտում	Իրազեկվածության բարձրացում	Դեկաններ, ուսումնական վարչություն	2012-2013 թթ.



նպատակով					
6	Ուսանողների շրջանում անցակցնել հարցում ուսանողների միջոցով	Բացահայտում	Խնդիրների վերհանում	Ուսանողներ, ուսումնական վարչություն	2012-2013 թթ.
Ուսումնական մասի գործողությունները					
	Միջոցառում	Բնույթ	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու	Վերջնաժամկետ
1	Մշակել/Հստակեցնել ԵԳՊԱ-ի բոլոր մասնագիտությունների ընդունելության քննությունների պահանջները և ընթացակարգերը և հրապարակել դրանք	Կանխարգելում	Իրազեկվածության բարձրացում, թափանցիկության ապահովում	Ուսումնական վարչություն, դեկանատներ, ուսխորհուրդ	2013թ.
2	Մշակել ուսանողների շարժունությունը ապահովող (տեղական և միջազգային) ընթացակարգ հիմք ընդունելով ԿԳՆ համապատասխան փաստաթղթերը	Կանխարգելում	Ապահովել ուսանողների իրազեկվածությունը և շարժունության թափանցիկությունը	Ուսումնական վարչություն, դեկանատներ, միջ. կապերի բաժնի վարիչ	2013թ.
3	Մշակել ուսանողների շարժունությունը ապահովող փաստաթղթերի փաթեթ և տեղադրել այն ԵԳՊԱ կայքում	Կանխարգելում	Իրազեկվածության բարձրացում, թափանցիկության ապահովում	Ուսումնական վարչություն, դեկանատներ	2013թ.
4	Մշակել քնությունների արդյունքների ամփոփման և ամենամյա փոխատեղության (ռոտացիայի) կարգ և ընթացակարգ և հրապարակել ինչպես մշակված փաստաթղթերը այնպես էլ հանձնաժողովի որոշումը:	Կանխարգելում և բացահայտում	Իրազեկվածության բարձրացում, թափանցիկության ապահովում	Ուսումնական վարչություն	2013թ.
5	Կազմել հատուկ հանձնաժողով որը		Ռոտացիայի և	Ուսումնական	2013թ.



	կգրադվի ռոտացիայի և գեղճերի բողոքարկման հարցերով: Մշակել այդ հանձնաժողովի աշխատանքները կարգավորող փաստաթղթեր: Հրապարակել արդյունքները:		գեղճերի բողոքարկման հարցերի կարգավորում: Իրազեկվածության բարձրացում, թափանցիկության ապահովում	վարչություն	
6	Ուսանողներին իրազեկել հեռացման, վերականգման, փոխանակման, շարժունակության կարգերի և ընթացակարգերի մասին	Կանխարգելում	Իրազեկվածության բարձրացում, թափանցիկության ապահովում	Ուսումնական վարչություն, դեկանատներ, ուսխորհուրդ	2013թ.
7	Իրականացնել ուսանողների հեռացման, վերականգման, փոխանակման և շարժունակության գործընթացների մշտադիտարկում տարեկան կտրվացքով	Կանխարգելում և բացահայտում	Գործընթացների իրականացման վերլուծություն և խնդիրների վերհանում	Ուսումնական վարչություն, դեկանատներ, ուսխորհուրդ	2013թ.
Աշխատանքային հարաբերությունները					
	Միջոցառում	Բնույթ	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու	Վերջնաժամկետ
1	Մշակել պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, վարչակազմի և այլ աշխատակիցների որակավորման բարձրացման ծրագիր և մշտադիտարկել նրա իրականացումը:	Կանխարգելում	Աշխատակազմի որակի ապահովում, մասնագիտական զարգացման գործընթացի թափանցիկության ապահովում	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ուսումնական վարչություն, կադրերի բաժին	2013թ.
2	Իրականացնել անձնակազմի հավաքագրման գործընթացի	Կանխարգելում	Գործընթացի իրականացման	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր,	2013թ.



մշտադիտարկումներ		վերլուծություն և խնդիրների վերհանում	ուսումնական վարչություն, կադրերի բաժին		
3	Ներքին աշխատանքների իրականացման աուդիտի կազմակերպում	Կանխարգելում	Կադրերի բաժնի գործողությունների թափանցիկության ապահովում	Բաժնի վարիչ	2012թ.
4	Կոռուպցիոն երևույթների դեմ միջոցառումներին նվիրված լուսաբանում	Կանխարգելում և բացահայտում	Իրազեկվածության բարձրացում, թափանցիկության ապահովում	Ուսումնական վարչություն, դեկանատներ, ուսխորհուրդ, հասարակության հետ կապերի մասնագետ	2012-2013 թթ.
5	Ուսումնական գործընթացի գնահատում	Կանխարգելում և բացահայտում	Գործընթացի իրականացման վերլուծություն և խնդիրների վերհանում	Ուսումնական վարչություն, դեկանատներ, ուսխորհուրդ	2012-2013 թթ.
6	Մշակել և իրականացնել դասախոսների և աշխատակիցների կատարողականի գնահատման քաղաքականությունը և իրականացնել առաջին փուլը	Կանխարգելում	Դասախոսների և աշխատակիցների կատարողականի արդյունավետության գնահատում	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ուսումնական վարչություն, կադրերի բաժին, որակի ապահովման կենտրոն	2012-2013 թթ.
Ֆինանսատնտեսական կառավարում					
Միջոցառում		Բնույթ	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու	Վերջնաժամկետ



1	Գույգի հաշվառում և կողավորում ինչպես նաև դրանց շրջանառության թափանցիկությունը ապահովող քաղաքականության և ընթացակարգերի մշակում և կիրառում	Կանխարգելում և բացահայտում	Հաշվառված գույք	Ֆինանսատնտեսական զծով պրոռեկտոր	2012-2013 թթ.
2	Գնումների իրականացման մշտադիտարկում	Կանխարգելում	Պատշաճ կերպով կատարված գնումներ	Ֆինանսատնտեսական զծով պրոռեկտոր, որակի ապահովման կենտրոն	2012-2013 թթ.
3	Գնումների գործընթացների ներքին աուդիտի իրականացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում:	Բացահայտում	Գործընթացի իրականացման վերլուծություն և խնդիրների վերհանում	Ֆինանսատնտեսական զծով պրոռեկտոր	2012-2013 թթ.
4	Աշխատավարձերի դրույքաչափերի սահմանում և հրապարակում:	Կանխարգելում	Իրագեկվածության բարձրացում, թափանցիկության ապահովում	Ռեկտոր	2012թ.